ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «12» նոյեմբերի 2019թ.

2019թ-ի հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 12-ը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում, տեղի ունեցավ **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144** ծածկագրով (*աուդիտորական ծառայություններ)* գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Բաղդասարյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսական տնօրեն.
Ա. Սերոբյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ.
Գ. Ախոյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահական ծառայության ղեկավար.
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.
Ա. Վարդապետյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի իրավապայմանագրային բաժնի պետ:

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ալիսա Բաղդասարյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144** ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144** ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ հայտնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը ներկայացվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

- **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ի որակավորման չափանիշները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ՝
- Մասնակցի կողմից ներկայացված համանման պայմանագրում ՝ ծառայության մատուցման ժամկետ է սահմանվում՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրը, սակայն վերջինիս կողմից ներկայացված՝ հաշիվ-ապրանքագրի և ակտի ամսաթվերը չեն համապատասխանում պայմանագրով սահմանված ժամկետին:
- Ինչպես նաև բացակայում է պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող՝ հանձման-ընդունման արձանագրությունը:

Որոշվեց՝

1. Նիստը կասեցնել 3 աշխատանքային օրով:
2. Տիրան Լաճիկյանին՝ ծանուցել մասնակցին առաջարկելով սահմանված կարգով շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովն արձանագրեց, որ Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ի կողմից սահմանված կարգով շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

Որոշվեց՝

1. Տիրան Լաճիկյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

2. Հաստատել **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144** ծածկագրով գնմանն ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

1) Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ՝ բավարար.

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/144** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Բաղդասարյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Սերոբյան _____

Գ. Ախոյան _____

Ա. Պետրոսյան _____

Ա. Վարդապետյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____